



# Ալեքսանդր Շիրվանզադե

## Լուրեր

Շոգերը սկսվել են, նյարդերս հոգնել են. գրելու ախորժակ չունեմ և ի՛նչ գրեմ: Ժողովները վերջացան, ընտրությունները նույնպես: Այժմ բոլոր պրոպագանդիստները և հոեռոտրները սկսել են սառը բաղնիք ընդունել իրենց տաքացած գլուխները մի քիչ հովացնելու համար:

Ուղիղն ասած ֆելիետոնիստի դերը ինձ այլևս դուր չէր գալիս: Այժմ ուզում եմ վիպասան դառնալ: Անցյալ օրը հաշվեցի և տեսա, որ վերջին վեց ամսվա ընթացքում հայոց մեջ երևան են եկել ոչ ավելի, ոչ պակաս վեց հատ վիպասան: Եվ ի՛նչ վիպասաններ մեկը մյուսից հանձարեղ: Այժմ ես զբաղված եմ այդ նորագույն հանձարների երկերը ուսումնասիրելով: Շնորհակալ եմ, անցյալ օրը «Տարագի» խմբագրությունը բարեհաճեց ինձ ցույց տալ այդ աղամանդները: Հիացած եմ, չգիտեմ ինչպես արտահայտեմ իմ ուրախությունը հայ գրականության այդ արագ զարգացման մասին, երևակայեցեք, վեց ամսում ծնել վեց վիպասան ոչ մի ազգ, կարծեմ, աշխարհիս երեսին ընդունակ չէ: Իսկ հայոց ազգը ծնում է, այն էլ առանց երկունքի, առանց մանկաբարձուհու: Հապա ո՞ր ազգն ունի այդպիսի ստեղծագործական հանձար . . . Ո՞ր ազգը կարող է տալ կես տարում այդպիսի վիպասաններ, որպիսիք են՝ Ասքանազ Փամբակեցի, Ապրիլյան, Գրիգորյան Սահ . , Տ . -Չաքարյան Արշակ, Թումանյան: Вездь դա սկանդալ չէ՛, որ ամեն օր ծնում են ֆրանսիական պատգամավորների ժողովում բուլանժիստները, այլ հանձար: Ես կարծում եմ, որ եթե մեր գրականությունը այս չափով զարգանա, հիսուն տարուց հետո բոլոր հայերը վիպասաններ և քնարերգներ կդառնան: Ա՛յ երևելի ժամանակ կլինի, հա՛, հա՛: Բայց հետաքրքրական է իմանալ, էլ ընթերցողներ կմնա՞ն, թե բացի գրողներից, ոչինչ

չենք ունենալ:

---

Սողունների աշխարհում մեծ իրարանցում կա: Լուր է եկել, որ այսօր, վաղը նրանց վրայով պետք է անցնի մի հսկայական ոտք և ջարդուփշուր անի բոլորին: Նրանք խմբվել են միասին և չգիտեն ի՞նչ անեն: Անցյալ օրը պատահեցի նրանցից մեկին՝ որ գլուխը քաշ գցած՝ գնում էր վանքի եկեղեցին մաղթանք լսելու: Նա կոնատակին ուներ մի քանի կապ թղթեր:

Դա ի՞նչ է կոնատակիդ, բարեկամ հարցրի ես: Սներեսը նայեց ինձ և պատասխանեց.

Մրանք իմ դիպլոմներին են, որ ստացել եմ հայ ազգից իմ տասնամյա ազնիվ, անշահ, անձնվեր գործունեության մասին: Պետք է ներկայացնեմ մեր հոգևոր նոր Պետին, որպեսզի նա ինձ ընդունի, իբրև իր ամենահավատարիմ և սիրելի զավակ:

Ես հետաքրքրվեցի սներեսի դիպլոմներով և կարդացի հետևյալ վերնագրերը. «Նավթաքաղաքի ամենամյա տուրքը», «Երեցփոխների հարկը», «Ներսեսի մահարձանը», «Կիլիկիայի կորիզները»: Հասկացա, թե բանն ինչու՞մ է, եթե կարող եք դուք էլ հասկացեք:

Մի քանի քայլ անցած՝ պատահեցա մի ուրիշ սողունի: Դա էլ կոնատակին պահած ուներ իր տասնուհինգ ամյա գործունեության ամփոփ վկայականը: Միայն մի հատ վկայական, որի վերնագիրն էր «Սրբությունների աճուրդ»:

Եվ դու հույս անես այդ վկայականով վայելել մեծ մարդու սե՞րը, հարցրի ես աներեսին: Նա ժպտաց անհամեստ կերպով և պատասխանեց. Ես մեծամեծ ծառայություններ եմ արել Էջմիածնին «Հազագու վերաշինության Վանուց» խնդրի ժամանակ...

Եվ աներեսը սներեսի հետ թև-թևի տալով մտավ աստծո տաճարը:

---

Մի քանի հետաքրքիր լուրեր:

Հաստատ աղբյուրներից տեղեկցա, որ Թիֆլիսի քաղաքային վարչության ծառայողները մի խնդրանքով դիմել են քաղաքագլխին, բողոքելով, որ վարչության դիվանատան դեմուդեմ գտնվող անկյունի տնից՝ ամեն օր վատ զարշահոտություն է փչում: Հազարաչին սանիտարական բժիշկը, քաղաքագլխի հրամանով գննելով հիշյալ տունը, գտել է մի կույտ զարշահոտ լեշեր: Ասում են, Դումայի նիստում պ. Աբգար Հովհաննիսյանը պետք է մի պաշտպանողական ճառ արտասանի:

---

Լսում են, որ հռչակավոր հայ գիտնական Կանայանցը Ներսիսյան դպրոցում ընդունված է պրոֆեսոր:

---

Ինձ հաղորդում են, որ «Արձագանքի» աշխատակից իշխան Կ. Բեհրությանը սարկավագության աստիճան է ստացել:

---

Նշանավոր հայ մանկավարժ Իսահակ Հարությունյանը այս ամառ գիտնական արշավանք չի կատարի:

---

«Արձագանքի» խմբագիրը պատրաստվում է գնալ Տրիեստ՝ Վեհափառին դիմավորելու: Ի՞նչ դիմակով:

---

Ամսույս 16-ին, առավոտյան 7½ ժամին, հայտնի արևելագետ Քարամյանցը բարեհաճեց ֆուրգոնով ուղևորվել Էջմիածին գիտական հետազոտություններ անելու նպատակով պարիսպների տակ:

---

Ներսիսյան դպրանոցի հոգաբարձությունը վճռել է շուտափույթ ստորագրել բոլոր արձանագրությունները և առաջիկա չորսամյակի համար կազմել «գիտնական» ուսուցիչների խումբ, որպեսզի չլինի, թե վեհափառի գալուստը խանգարի նրան: Իսկ դպրանոցի տեսուչ Կոստանյանցը մտադիր է ուղևորվել Վիեննա, ուր նրան սպասում են անհամբեր: